ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 28
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 28

ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒՇԵՂ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

[redacted]

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 25-ի
info@cpcarmenia.am էլ.փոստին ուղարկած գրության

Հարգելի՛ պարոն Հովսեփյան,

1. Գրության 1-ին կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Բարեվարքության հարցերով կազմակերպիչը համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումը Հանձնաժողովը 2019 թվականի դեկտեմբերի 17-ին գրությամբ դիմել է 29 ՀՀ պետական գերատեսչությունների՝ խնդրելով տրամադրել բարեվարքության համակարգի մաս կազմող գործող վարքածի կանոնները և դրանց կիրառելիության վերաբերյալ ամփոփ տեղեկություն, որպեսզի հնարավոր լինի իրականացնել համապատասխան կարիքների գնահատում: 2020 թվականի հունվարին Հանձնաժողովը ստացել է պատասխանները, ամփոփել դրանք,

համադրել միջազգային փորձի հետ և դրա հիման վրա առաջարկություններ ներկայացրել պետական կառավարման մարմիններին վարքագծի կանոնների կիրառելության արդյունավետության համար: Տեղեկացնենք նաև, որ այս ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են նաև 2021 թվականի ընթացքում:

2. Գրության 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը Հանձնաժողովի կողմից հարուցվել են հետևյալ վարույթները.

- Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով վարույթը հարուցվել է 2019թ դեկտեմբերի 9-ին: Տվյալ գործով եզրակացությունը կայացվել է 2020 թվականի մարտի 6-ին: Հանձնաժողովը եզրահանգել է, որ Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից Հանրային ծառայության մասին օրենքի բովանդակային իմաստով անհամատեղելիության պահանջների խախտում առկա չէ:
- ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանի նկատմամբ վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով վարույթը հարուցվել է 2020 դեկտեմբերի 12-ին: Տվյալ գործով եզրակացությունը կայացվել է 2020 թվականի մարտի 11-ին: Հանձնաժողովը եզրահանգել է, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանի կողմից ՀՀ փաստաբանների փալատի անդամ, փաստաբան Վահագն Մնացականյանին հասցեագրված պատասխան գրությունը, դրանում օգտագործված արտահայտությունները, չեն արտահայտում հանրային ծառայողի կողմից մարդու իրավունքները հարգելու սահմանադրական պարտականության, բարեկրթության և հարգալիրության սկզբունքի էությունը, այնուամնեայնիվ հանրային ծառայողի վարքագծի կանոնների բացակայության պարագայում Հանձնաժողովն իրավաչափ հիմք չունի այն որակել որպես վարքագծի կանոնների խախտում և այդ հիմքով առաջարկել Կարեն Կարապետյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառել:

- 2020թ. հուլիսի 6-ին հարուցվել է վարույթ ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանի կողմից պահանջների առերևույթ խախտման հիմքով: 2020թ. հոկտեմբերի 26-ին Հանձնաժողովը կայացրել է եզրակացությունը համաձայն որի՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանի կողմից խախտվել է Հանրային ծառայության մասին օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի մասի1-ին և 4-րդ կետերի պահանջները:
- 2020 հուլիսի 31-ին Հանձնաժողովը ՀՀ առողջապահության նախարար Արսեն Գևորգի Թորոսյանի կողմից Հանրային ծառայության մասին օրենքով սահմանված իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով հարուցել է վարույթ: Վարույթի գտնվում է քննության փուլում:

Դիմումում նշված ժամանակահատվածում Հանձնաժողովը հարուցել է նաև 57 վարույթ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ, որից 55 վարույթը՝ հայտարարագրերը չներկայացնելու համար, 2-ը՝ հայտարարագրում ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տեղեկություն է տրամադրվում տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին(...): Ուստի գրության 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերի համար առաջարկում ենք այցելել Հանձնաժողովի կայքի որոշումներ բաժինը http://cpcarmenia.am/hy/decisions/

3. Գրության 6-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովը, որպես սկզբնաղբյուր դիտարկելով հայտարարտու պաշտոնատար անձանց հայտարարագրերը, բոլոր այն դեպքերում, երբ իրականացվել է հայտարարագրերի համալիր վերլուծություն, ուսումնասիրել է նաև հանչային ծառայողի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ անմիջական ենթկայության կամ վերահսկողության ներքո աշխատելու հանգամանքը: Նույն կերպ՝ պետական պաշտոնի ենթակա

թեկնածուների համար օրենքով նախատեսված բարեվարքության ստուգման շրջանակներում Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ նույն օրենքի իմաստով մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկությունները:

4. Գրության 7-րդ կետի համար առաջարկում ենք դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը:
5. Գրության 8-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է հանդիսանում վարույթների և իրավական ապահովման վարչության պետը:
6. Գրության 9-րդ և 10-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այս պահին ընթանում են Հանձնաժողովի կայքի նորցամն աշխատանքները, որոնց շրջանակներում Հանձնաժողովի ամբողջ գործունեության, այդ թվում՝ անդամների վերաբերյալ տվյալները կհրապարակվեն կայքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**